



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«19» 09 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000070

Ձեռնարկողը՝

«Մառա և դուստրեր» ՍՊԸ
Ք. Երևան, Բուզանդի 1/3

Գործունեությունը՝

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի շենքի ուժեղացման, վերակառուցման և նոր մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000070

<18> 09 2019թ.

**«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամի շենքի ուժեղացման, վերակառուցման և նոր մասնաշենքերի
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	«Մառա և դուստրեր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի շենքի ուժեղացման, վերակառուցման և նոր մասնաշենքերի կառուցման նախագիծն իրականացվելու է «Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի» շրջանակներում՝ Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ: Ծրագրի իրականացնող մարմին է հանդիսանում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը /ՀՏԶՀ/: Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը:

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի շենքի ուժեղացման, վերակառուցման և նոր մասնաշենքերի կառուցման տարածքը գտնվում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հր. Ներսիսյան փողոց՝ 3 և 3/1 հասցեներում՝ ներկայիս գործող դպրոցի տարածքում: Նախագծման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից տրված № 01/18-07/2-43747 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք) և անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականները (վկայական N 17102017-01-0192 և վկայական N 17102017-01-0242):

Գոյություն ունեցող դպրոցը բաղկացած է երեք մասնաշենքից, որոնցից երկուսն առանձնացված են իրարից դեֆորմացիոն կարանով: Երրորդ մասնաշենքը միահարկ կառույց է, որը չի օգտագործվում: Երկրորդ և երրորդ մասնաշենքերի տեխնիկական վիճակը անբավարար է, ենթակա են քանդման: Առաջին մասնաշենքը՝ նկուղային հարկում, եռահարկ, ուղղանկյունաձև, 42.6x14.95մ առանցքային չափերով շինություն է, որն ենթակա է վերակառուցման:

Վերակառուցվող մասնաշենքի համար նախագծով նախատեսված տեղումնորոշման հարկում են.

- պահպանել գոյություն ունեցող գլխավոր, կողային ճակատների պատերը և բակային ճակատի սրբատաշ քարե շարվածքով պատի հատվածը,



• քանդել ներքին լայնական և երկայնական պատերը և բակային ճակատի սվաղված հատվածը,

- շինարարության ընթացքում ապահովել պահպանվող պատերի կայունությունը,
- կառուցել ներքին տարածքը՝ նոր հատակագծային և կոնստրուկտիվ լուծումներով:

Դպրոցը նախագծված է 630 աշակերտների համար: Դպրոցի տարածքն աչքի է ընկնում քարքարոտ, կամ ավազային հողային ծածկույթով: Նախագծի իրականացման արդյունքում դպրոցի տարածքում առկա՝ 1100,0քմ կանաչապատ տարածքը հնարավորինս պահպանվելու է, տարածքում նախատեսվում է նաև լրացուցիչ ծառատունկ: Տարածքի կանաչապատ և ասֆալտապատ գոտիների մակերեսները համապատասխանաբար կկազմեն՝ 1203,7քմ և 2684.14քմ: Կանաչապատ տարածքների ոռոգման համար նախագծով նախատեսվում է ոռոգման ցանցի կառուցում:

Նախագծված կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 5960մ²,
- կառուցապատման մակերես՝ 2072.16մ²,
- բարեկարգման մակերես՝ 3887.84մ²,
- կանաչապատման մակերես՝ 1203.7մ²:

Նախագծված դպրոցը բաղկացած կլինի սեյսմիկ կոնստրուկտիվ կարերով միացված 6 մասնաշենքերից: Մասնաշենքերից երկուսում նախատեսված է կառուցել 26 դասասենյակներ, աշխատասենյակներ և լաբորատոր սենյակներ: Երկրորդ մասնաշենքը կծառայի որպես հանդիսության սրահ և ճաշասենյակ, իսկ երրորդ մասնաշենքը՝ միահարկ, տաք անցումով կկապի 1, 2, 4 մասնաշենքերը: Հինգերորդ մասնաշենքը կծառայի որպես մարզադահլիճ՝ 2 հանդերձարաններով, լողասենյակներով և սանհանգույցով: Ուսումնական վերակառուցվող թիվ 1 մասնաշենքը բաղկացած կլինի 3 վերգետնյա և նկուղային հարկերից: Այդ մասնաշենքի տանիքին նախատեսված է տեղադրել արևային էլեկտրագիայի 39,6Վ 280ՎՏ հզորության վահանակներ՝ թվով 120 հատ:

Բոլոր մասնաշենքերի շուրջ պարագծով նախատեսված են սավաճքներ, իսկ երթևեկելի մասն իրականացվելու է ասֆալտբետոնյա ծածկույթով՝ համապատասխան թեքություններով, ապահովելու նպատակով մակերևույթային ջրերի հեռացումը փողոցային ցանց:

Դպրոցի ջրամատակարարումն, ինչպես և նախկինում, իրականացվելու է Ներսիսյան փողոցով անցնող՝ 300մմ տրամագիծ ունեցող քաղաքային ջրագծից, իսկ ջրահեռացումը կմիացվի Ներսիսյան փողոցով անցնող՝ 300մմ տրամագծի քաղաքային կոյուղագծին: Դպրոցում նախատեսված են ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր, ինչպես արհեստական այնպես էլ բնական եղանակներով: Բնական արտածումը նախատեսված է դասարանների և կաբինետների համար:

Դպրոցի ջեռուցումն իրականացվելու է նոր կառուցվող կաթսայատան միջոցով (թիվ 6 մասնաշենք)՝ երկու ջրային կաթսաներով, 6600կկալ/մ³ ջերմատվությամբ: Բնական գազի առավելագույն ծախսը կկազմի 41.3մ³/ժ, ծխագազերի հեռացումը նախատեսված է իրականացնել 9մ բարձրությամբ ծխնելույզի միջոցով:

Շինության համար պահանջվող էլեկտրաէներգիայի մատակարարումը կիրականացվի 0,4կՎտ օդային մալուխային գծից:

Շինարարական աշխատանքների ընթացքում հողային աշխատանքները ներառում են հետևյալ ծավալները.

- դպրոցի երկու շենքերի քանդում՝ 5600մ³,
- թիվ 1 մասնաշենքի ներքին հատվածի քանդում՝ բացառությամբ արտաքին պատերի՝ 9030մ³,
- խրամուղիների և փոսորակների փորում կառուցվող շենքերի հիմքերի համար 4220.4մ³,
- տարածքի համահարթեցում, բարեկարգման հանույթ՝ 161.6մ³,
- ընդհանուր հանույթի տեղափոխում՝ 4382մ³,



- հիմքերի ակունների լիցքի համար բերվող խճաավազային գրունտ՝ 5162 մ³:

Քանի որ տեղանքի գրունտը պիտանի չէ բարեկարգման և հողային աշխատանքներում օգտագործելու համար, հետլիցքի համար նախատեսվում է լրացուցիչ գրունտ, որը բերվելու է այլ վայրից: Իսկ կանաչապատման աշխատանքների համար բերվելու է բուսահող՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված: Հողային աշխատանքներից և քանդման արդյունքում առաջացող և հեռացման ենթակա մնացորդային գրունտը և շինադրը առանց պահեստավորման տեղափոխվելու են Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայրեր:

Շինաշխատանքների համար պահանջվող ջրաքանակը նախատեսվում է վերցնել տարածքում առկա ջրագծից: Ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 21 ամիս: Շինհրապարակի կազմակերպումը, շինանյութերի ժամանակավոր կուտակումը, ինչպես նաև շարժական տնակի տեղադրումը կազմակերպվելու են բացառապես դպրոցի տարածքի ներսում, որը կառանձնացվի համապատասխան ցանկապատով:

Նախնական գնահատման հայտում վերլուծվել է նախագծված դպրոցի շինարարության և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունները և մշակվել են բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում (ԲԿՊ):

Շինարարության փուլի համար հաշվարկվել է հողային աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու արտանետումները /որը կկազմի՝ 0.41գ/վրկ, կամ 1.1տ/շին.ժամանակահատված/, որի քանակները թույլատրելի նորմերի սահմաններում պահելու նպատակով նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ: Փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով նախատեսվել է շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների տեղաշարժ՝ թափքի ծածկման պայմանով, շինհրապարակ մուտք գործող և դուրս մեքենաների անվադողերի լվացում:

Շինարարական աշխատանքների ընթացքում հեղուկ վառելիքի մնացորդային քանակները, քսայուղերը նախատեսվում է պահել անթափանց փակ տարաներում, հետագայում, որպես երկրորդային նյութ այլ աշխատանքներում կրկնակի օգտագործելու նպատակով:

Հայտում վերլուծվել են նաև՝ շինարարության ընթացքում աղմուկի, թթռումների, երթևեկության ծանրաբեռնվածության հնարավոր ազդեցությունները շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա և վերջիններից խուսափելու նպատակով բնապահպանական կառավարման պլանում նախատեսվել են մեղմացնող միջոցառումներ: Նախատեսվել են նաև աշխատանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ, հնարավոր սոցիալական ազդեցությունները բացառելու նպատակով:

Համաձայն նախագծի նախատեսվում է ընդլայնել կանաչապատ տարածքները, /հասցնելով՝ 1203.7քմ/, լրացուցիչ իրականացնելով ծառատունկ՝ հացենու, ակացիայի, կաղնու և թույաների տեսակներով: Կանաչապատման համար անհրաժեշտ կլինի 55մ³ բուսահող, որը նախատեսված է բերել տարածք անմիջապես օգտագործման համար: Շինարարության ընթացքում հնարավոր ազդեցության ենթակա ծառերի էտումը /թվով 8 հատ/ և տեղափոխումը /թվով 8 ծառ/ կիրականացվի Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված «Տարածքի կանաչապատ գոտիների բարեկարգման նախագծի» շրջանակներում: Մնացորդային աղբերը շրջանակում իրականացվող կանաչապատման միջոցառումների շրջանակում արժեքը գնահատվել է 369 150 ՀՀ դրամ, /որի մեջ մտնում է ծառատունկը, սիգնալիզացիայի մատչումը, բուսահողի բերումը և փոումը/: Նշված ծախսերը ներառված են դպրոցի Նախագծի ծավալաթերթերում: Տարածքի հետագա խնամքով զբաղվելու է դպրոցի տնօրինությունը:



Ծրագրի պատվիրատուի՝ ՀՏՀՀ-ի կողմից, կանոնավոր մոնիթորինգի միջոցով ստուգվելու է բնապահպանական միջոցառումների կատարման արդյունավետությունը, ներառյալ՝ տարածքում առկա ծառերի և թփերի աճման և կաչողականության մշտադիտարկման/վերահսկման իրականացումը:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան համայնքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել շինարար կապալառուի կողմից գործունեության ընթացքում բնապահպանական մեղմացնող միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- «Մառա և դուստրեր» ՍՊԸ կողմից ներկայացված «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի շենքի ուժեղացման, վերակառուցման և նոր մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:



Գլխ. մասնագետ

Հ. Մկրտչյան